ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սովորողների մոտ պատկերավոր մտածողություն և փաստարկված խոսք կազմելու հմտությունների ձևավորումը «Գրականություն» առարկայի դասերին»

Կատարող՝ Խանոյան Սոֆիկ

Դպրոց՝ Երևանի Վ.Վաղարշյանի անվան հ. 80 հիմնական դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանի» ՀԿ

Խմբի պատասխանատու՝ Զոհրաբյան Անահիտ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Սովորողների պատկերավոր մտածողության ձևավորումը «Գրականություն» առարկայի դասերին---------- 5

Սովորողների փաստարկված խոսք կառուցելու հմտությունների ձևավորումը «Գրականություն» առարկայի դասերին---------- 12

Եզրակացություն----------18

Օգտագործված գրականության ցանկ ---------- 19

Ներածություն

«Գրականությունը հայելի չէ լոկ և եթե հայելի էլ ասենք,
ապա շատ տարօրինակ ու կախարդական հայելի է:»:[1]

Հ.Թումանյան

Արդիականությունը: Տեղեկատվության բազմակողմանի հասանելիության այս ժամանակաշրջանում ուսումնական հաստատություններն ու ուսուցիչը կանգնում են նոր մարտահրավերների առաջ: Այսօր արդեն դպրոցն ու ուսուցիչը միայն տեղեկատվություն ու գիտելիք փոխանցողներ չպիտի լինեն, իսկ սովորողն այդ գիտելիքը յուրացնող: Ուսուցիչը պետք է կարողանա իր փոխանցած գիտելիքների միջոցով սովորողի մոտ ձևավորել հմտություններ, որոնք կօգնեն ճիշտ կողմնորոշվել կյանքի ցանկացած իրավիճակում, կարողանալ ինքնուրույն և ազատ մտածել, լինել ստեղծագործ անհատ և գաղափարները դիտարկել տարբեր տեսանկյուններից:
Այս առումով մեծապես կարևորվում է սովորողների մոտ պատկերավոր մտածողություն զարգացնելու և փաստարկված խոսք կառուցելու հմտությունների ձևավորումը հատկապես «Գրականություն» առարկայի դասերին:

Բացի այդ, գրականության ուսումնասիրությունը նաև հիմք է ստեղծում այլ առարկաներից գիտելիք ձեռք բերելու, ներառարկայական և միջառարկայական , հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով ներկայացնելու համար:

Գրականության ուսումնասիրության միջոցով ենք հասկանում և վերլուծում տեքստի ենթաիմաստը, հեղինակի ասելիքը, գրողի վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները և այլն: Իսկ գեղարվեստական երկի համակողմանի ուսումնասիրության ժամանակ զարգանում է սովորողի քննադատական և պատկերավոր մտածողությունը, վերլուծելու և ճիշտ եզրահանգումներ անելու կարողությունը և այլն:

Չափորոշչում տեղ գտած նոր մոտեցումները բխում են ժամանակակից հասարակության պահանջներից, հետևաբար, այն պետք է ուղղված լինի ստեղծագործ, ինքնուրույն և ազատ անհատականության ձևավորմանը:

Նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել մանկավարժական այն մեթոդներն ու մոտեցումները, որոնք նպատակաուղղված են ձևավորել և զարգացնել սովորողի մոտ պատկերավոր մտածողություն և փաստարկված խոսք կառուցելու հմտություն՝ «Գրականություն» առարկայի դասերին:

Խնդիրները: Հետազոտության խնդիրներն են.

[1] Միքայելյան Ա., Մարդումյան Մ., Մտքի հրավառություն, Երևան, 2002

- ✓ Վերլուծել պատկերավոր մտածողության և փաստարկված խոսքի ձևավորման մանկավարժական, մեթոդական, լեզվաբանական, հոգեբանական, մշակութաբանական մոտեցումները,
- ✓ Ներկայացնել մեթոդներ ու միջոցներ, որոնք կնպաստեն սովորողների մոտ պատկերավոր մտածողության և փաստարկված խոսքի ձևավորմանը:

Հետազոտության նորարարությունն ու նշանակությունն այն է, որ մշակվել է պատկերավոր մտածողության և փաստարկված խոսքի զարգացման կոնկրետ մեթոդաբանություն՝ հոգեբանական, լեզվաբանական, մշակութաբանական հիմնավորմամբ: Այս ամենն էլ հնարավորություն է ստեղծում առավել արդյունավետ լուծումներ առաջարկել մեր առջև դրված խնդիրներին:

Սովորողների պատկերավոր մտածողության ձևավորումը «Գրականություն» առարկայի դասերին

Գրականությունն ուղեկցում է մեզ ամբողջ կյանքում: Դպրոցական նստարանից կարդացացծ գրքերը մեր առջև բացում են ճանաչողության նոր աշխարհ, ներշնչող մարդկային բնավորություններ ու ճակատագրեր, նպաստում են մեր մարդկային նկարագրի ձևավորմանը: Մտավոր կյանքով ապրող անհատը երբեք չի կարող կտրվել գրականությունից, որովհետև ամեն մի հասակում նրա մեջ գտնում է նոր մտքեր ու նոր գեղեցկություն, յուրատեսակ հոգեկան սնունդ է քաղում նրանից, որն էլ հանդիսանում է ներշնչանքի անսպառ աղբյուր:

Գրականությունը կյանքը պատկերում է անընդհատ շարժման, զարգացման մեջ և այդ ամենը ներկայացնում և ցուցադրում է պատմական կոնկրետությամբ: «Գործողության, կյանքի և մարդկային բնավորությունների շարժման ու զարգացման պատկերումը գրականության իսկական տարերքն է »:[2]

Գրականությունը հասարակական գաղափարախոսության հետ ամենից սերտորեն կապված արվեստն է:Պատկերվող երևույթների գնահատականն այստեղ սովորաբար ավելի հստակորեն է արտահայտվում:

Գրականությունն հաճախ ենք նույնացնում արվեստի տարբեր ճյուղերի հետ: Հետաքրքիր զուգադրություններ կան հատկապես կերպարվեստի հետ: Ճիշտ է, գրական պատկերները չունեն կերպարվեստի երկերի տեսողական անմիջականությունը, նրանց շոշափելի կոնկրետությունն ու արտաքին հստակությունը, բայց դա էլ հենց գրողին հնարավորություն է տալիս շատ ավելի ազատ լինելու ժամանակի ու տարածության մեջ՝ պատկերներ ցուցադրելու իմաստով: Բացի այդ, ընթերցողը գրական նկարագրության հիման վրա, երևակայության օգնությամբ, կարող է ստեղծել առարկայական շոշափելիության հասնող պատկերներ:

«Օրինակ, երբ մենք կարդում ենք Լոռու ձորի թումանյանական հայտնի նկարագրությունը, կարծես մեր աչքերի առջև տեսնում ենք լեռնային բնության կենդանի պատկերը՝ իր վեհ ու դաժան գծերով.

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ

[2] Ջրբաշյան Է.,Գրականագիտության ներածություն, Երևան 1996

Հայացքով իրար նայում են հանդարտ»:[3]

Այսպիսով, գրականությունը խոսքի օգնությամբ երբեմն զգալի չափով կարող է հասնել այն տպավորությանը, ինչ կերպարվեստն ու երաժշտությունը ստեղծում են գույների կամ հնչյունների միջոցով:

Պատկերավոր մտածողություն: Իրականության երևույթների և կապերի բազմազանությունը պայմանավորել է նրանց ճանաչողության և արտացոլման տարբեր ուղիներ, մարդկային մտածողության տարբեր եղանակներ: Աշխարհի հոգեկան յուրացումը մարդու կողմից տեղի է ունենում մտածողության երկու հիմնական ձևերով՝ **գիտական-տեսական** և **գեղարվեստական**: Երկուսն էլ ենթարկվում են իրականության ճանաչողության միևնույն օրինաչափություններին՝ կենդանի հայեցողությունից գնալով դեպի ընդհանրացում, ձգտում են տարբերել երևույթների գլխավոր գծերը երկրորդականից, հասնել իրականության էական կողմերի ճշմարտացի արտացոլման : Սակայն գիտական- տեսական մտածողության մեջ կյանքի ճանաչողության արդյունքներն արտահայտվում են տրամաբանական հասկացությունների, ընդհանուր օրենքների, իսկ գեղարվեստականի մեջ՝ կոնկրետ, զգացական բնույթ ունեցող պատկերների միջոցով:

Իհարկե, մտածողության այդ երկու եղանակները պարիսպներով անջատված չեն: Շատ հաճախ մենք հանդիպում ենք նրանց փոխադարձ ներթափանցմանը: Բոլորն էլ ունեն տեսական և գեղարվեստական մտածողության տարրեր: Պարզապես զարգացման չափերն ու համամասնություններն են տարբեր:

Տարբեր բնագավառներում հետազոտություն կատարելիս հաճախ ենք դիմում կյանքի այս կամ այն փաստի կենդանի, պատկերավոր նկարագրության: Հոգեբանը կամ մանկավարժը կարող են պատմել որևէ անձնավորության, նրա հետ պատահած որևէ իրական դեպքի մասին, որի միջոցով հաստատվում է որևէ դրույթ կամ գիտական օրինաչափություն: Մյուս կողմից վիպասանը կամ դրամատուրգը կարող են իրենց ստեղծագործության մեջ ուղղակիորեն, տրամաբանական ճանապարհով արտահայտել որևէ ընդհանուր դատողություն, քաղաքական կամ փիլիսոփայական միտք:

Հետևաբար, կյանքի որևէ կոնկրետ երևույթի պատկեր, ինքնին վերցրած, դեռ գեղարվեստական ստեղծագործության բուն էությունը չի մատնանշում:« Գեղարվեստական պատկերը կյանքի ոչ թե նկարագրական պատճենն է, այլ

[3] Ջրբաշյան Է.,Գրականագիտության ներածություն, Երևան 1996

ստեղծագործական վերարտադրությունը՝ կատարված արվեստագետի երևակայության գործուն մասնակցությամբ»:[4]

Գեղարվեստական պատկերը միշտ հոգեբանորեն հագեցած է: Այն արտացոլում է կյանքը որոշակի գեղագիտական դիրքերից, ենթադրում է բովանդակության և ձևի որոշ հատկանիշներ, վարպետության որոշ աստիճան և այլն:

«Գրականությունը խոսքի արվեստ է, նրա մեջ ամեն ինչ արտահայտվում է լեզվի միջոցով»:[5]

Լեզուն գրականության մեջ ծառայում է պատկերի ստեղծմանը, կյանքի պատկերավոր արտացոլմանը:

Գրական-գեղարվեստական պատկերի բոլոր հիմնական գծերը,- նրա կոնկրետությունը, անհատական և տիպական բնույթը, գեղագիտական նշանակությունը և այլն,- իրենց անմիջական կնիքն են դնում ստեղծագործության լեզվի վրա: Այդ լեզուն ամենից առաջ պատկերավոր լեզու է, այսինքն՝ ընթերցողի առջև մարդկային կյանքի, ներաշխարհի կամ բնության որևէ կոնկրետ վիճակ, տեսարան է դնում: Որպեսզի բացահայտվի պատկերի զգայական բովանդակությունը, լեզուն պետք է հագեցած լինի հուզական հատկանիշներով:

Գեղարվեստական խոսքի մեջ ևս լիուլի գործում է լեզվի և մտածողության, անխզելի միասնության օրենքը: Ստեղծագործության լեզվի ամեն մի թերություն ի վերջո հեղինակի մտածողության որևէ թերության արդյունք է և իջեցնում է երկի գեղարվեստական արժանիքը: Ստեղծագործական աշխատանքում մանրուքներ չկան, և նույնիսկ մեկ անճիշտ բառը կարող է լրջորեն վնասել ամբողջ գրական կառույցին:« Բանաստեղծի համար մի բառը մի աշխարհ է»,-ասում էր Թումանյանը՝ հաստատելով այն միտքը, որ ամեն մի բառ արտահայտում է գրողի հոգու մի մասնիկը, բխում է նրա առջև կանգնած գեղարվեստական խնդրից:

Եթե գրական պատկերը մարդկային կյանքի որևէ կոնկրետ վիճակի վերարտադրությունն է, ապա պատկերավոր արտահայտությունը մատնանշում է սոսկ որևէ հատկանիշ, տալիս է որևէ երևույթի զգացմունքային գնահատականը: Հետևաբար, սխալ է այն ըմբռումը, թե գրողը պատկերավորության կարող է հասնել միմիայն

[4] Ջրբաշյան Է.,Գրականագիտության ներածություն, Երևան 1996

[5] Ջրբաշյան Է.,Գրականագիտության ներածություն, Երևան 1996

համեմատությունների կամ փոխաբերական արտահայտությունների օգնությամբ, և որ ինչքան շատ լինեն այդպիսի տարրեր, այնքան երկն ավելի պատկերավոր է:

Մյուս կողմից, պատկերավոր արտահայտությունների ավելորդ կուտակումը, անպայման «զարդարուն» ոճով խոսելու ձգտումը հաճախ հանգեցնում է արհեստականության, իմաստի մթագնման, շեղում է հիմնական մտքից:

Սակայն, «բառային պատկեր» նշանակությունը, եթե դրանք օգտագործվում են վարպետորեն, երբեք չի կարելի թերագնահատել: Դրանք այն կարևոր միջոցներից են, որոնց օգնությամբ գրողն հասնում է պատկերման ավելի մեծ կոնկրետության և կենդանության, նկարագրվող երևույթի ավելի բազմակողմանի բացահայտման, խոսքի գեղարվեստական հնչեղության, զգացմունքայնության:

Այս ամենի հստակ իմացությունը միայն թույլ կտա բանիմաց ուսուցչին նպաստել աշակերտի պատկերավոր մտածողության ձևավորմանն ու զարգացմանը:

Գրականության ուսուցման հիմունքներից է նաև դասարանի աշակերտների ընդունակությունների ճիշտ ճանաչումը: Եթե ուսուցիչը հասկանում է, թե ինչ մակարդակի երեխաներից է կազմված դասարանը, ապա նա առավել ճիշտ մեթոդներով է իրականացնում իր առարկայի ուսուցումը:

Ուսուցման ընթացքում շարունակ անհրաժեշտ է ապահովել զննականությունը: «Աշակերտը հոգնում է միապաղաղ դասից, իսկ զննականության օգտագործումը միապաղաղության բացառումն է:»:[6]

Միջին դասարաններում աշակերտը միայն կարդացածը պարզ ձևով վերաշարադրող չէ: Նա գիտի գրականագիտական, վերլուծական որոշ բանաձևեր, առանձնացնում է գրական երկում գործող կերպարային համակարգը, որն ավագ դպրոցում օգնում է հասկանալ «տիպ» և «տիպական հանգամանքներ» հասկացությունները: Այդպիսի տիպական կերպարներ շատ կան հայ դասական գրականության մեջ: Դրանցից են Պեպոն, Զիմզիմովը, Միկիտան Սաքոն, Անդրեաս Էլիզբարովը, Համբոն, Բազազ Արտեմը և ուրիշներ:

Ռուս նշանավոր գրաքննադատ Վ. Բելինսկին գեղարվեստական գրականությունը համարում էր «պատկերավոր մտածողություն»:

[6] Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2006

«Գեղարվեստական պատկեր» հասկացությունը շատ լայն հասկացություն է: Գեղարվեստական պատկերը մարդկանց, բնության երևույթները, գրական երկում տեղի ունեցող գործողությունները ներկայացնում է պատկերի ձևով, որն ընթերցողը տեսնում է, լսում է ձայնը, զգում գույնը, դառնում կատարվածի ականատեսն ու դիտողը: Գեղարվեստական պատկերը կյանքի երևույթները ներկայացնում է որոշակի կոնկրետությամբ և անկրկնելի ինքնատիպությամբ: «Օրինակ՝ Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմում գյուղական միջավայրը ներկայացված է այնպիսի պատկերավորությամբ, որ այն երբեք նման չէ նույն հեղինակի «Հառաչանք» պոեմին:»:[7]

Գեղարվեստական պատկերի միջոցով գրողն արտահայտում է իր վերաբերմունքը կյանքի նկատմամբ, ինչն էլ ավելի լայն հնարավորություն է տալիս պատկերավոր մտածելու համար:

«Գեղարվեստական պատկերը երբեք կյանքի մեխանիկական կրկնությունը չէ, այլ գրողի երևակայությամբ ստեղծված կյանքի պատկերը:»:[8]

Պատկերավոր մտածողության մեջ առկա է հեղինակի թե՛ հուզական և թե՛ մտածողական կողմը, նրանում բանականը և հուզականը հանդես են գալիս միահյուսված: Որևէ գրող առանց երևակայության հզոր ուժի չի կարող ստեղծել գրական համակիչ ստեղծագործություն:

Գրողի համար կարևոր է նաև ներշնչումը: Այս երևույթը դիտարկվել է դեռևս անտիկ աշխարհում: Ներշնչումը կամ մուսան հեղինակին դրդում ենստեղծել իր գրական գլուխգործոցները: Այս երևույթը կապում էին հունական աստված Ապոլոնի հետ, որը մարդկանց պարգևում էր ստեղծագործելու շնորհը կան ձիրքը:

Ուսուցչի վարպետությունից է կախված, թե նա ինչպես կկարողանա աշակերտին հաղորդակից դարձնել նկարագրվող դեպքերին, հերոսների ներաշխարհին, այսինքն՝ աշակերտը կունենա գեղագիտական ընկալում:Աշակերտը հաղորդակից է դառնալու վեհի, գեղեցիկի, ողբերգականի, կոմիկականի դրսևորումներին:

«Գրականության միջոցով աշակերտն առավել նուրբ ձևով է ընկալում բնության գեղեցկությունները՝ ջրվեժի վեհությունը, մայրամուտի գույների կախարդանքը, գարնան

[7] Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2006

[8] Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2006

ծաղկունքի բազմազանությունը, աշնանային անտառի գույների խաղը, ծիածանի գույների նրբությունը և այլն:»:[9]

Պատկերավոր մտածողության ձևավորման համար շատ կարևոր են հետևյալ դրույթները.

ա) գրականության ուսուցումը սերտորեն կապել լեզվի ուսուցմանը՝ այն ծառայեցնելով սովորողների գաղափարական, գեղագիտական և բարոյական դաստիարակության խնդիրներին,

բ) գեղարվեստական գրականության ուսուցումն իրագործել գեղարվեստական ընթերցանության միջոցով՝ աշակերտներին սովորեցնելով ոչ միայն գեղեցիկ կարդալ, այլև երկը վերլուծել թե բովանդակային և թե ձևի առումով: Սովորողների իմացության շրջանակներն ընդլայնելու հետ մեկտեղ զարգացնել նրանց խոսքի մշակույթը և գեղագիտական ճաշակը,

գ) գրականության ընթերցանության ընթացքում լուծել ոչ միայն ուսուցողական, դաստիարակչական, այլև զարգացողական հարցեր,

դ) կազմակերպել սովորողների արտադասարանական ընթերցանությունը որպես նրանց ինքնազարգացմանը և գրականության ուսուցմանը օգնող օժանդակ միջոց:Սա է պահանջների հիմնականը:

Օրինակ, Ալ. Ճիրվանզադեն «Արտիստը» պատմվածքում պատկերել է տաղանդավոր երիտասարդի՝ Լևոնի կործանումը: Լևոնը, որ երազում էր թավջութակ նվագելու մեջ վարպետանալ, ոչնչանում է բիրտ շրջապատի հարվածների տակ: Եվ Ճիրվանզադեն նկարագրում է, որ, ցավոք, Լևոնը մենակ չէ, նույն մարդկային անտարբերության զոհերն են Իցկոն, Մարգուլիսը, Մադրիդի շրջմոլիկը:

Գրականությունը կյանքը պատկերելիս օգտվում է դեմքերի, նրանց վարքագծի, այդ վարքագծի դրսևորում ներկայացնող տեսարանների պատկերային համակարգից:

Պատկերի ամենապարզորոշ տեսակը լեզվական միջոցներն են: Բառական պատկերներն ունեն իրենց տարատեսակները(մակդիր, համեմատություն, այլաբանություն և այլն):Պատկերի տեսակների շարքում կենտրոնական և առաջատար են մարդկային կերպարները:

[9] Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2006

Պատկերավոր մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ են.

- ✓ «5 րոպեանոց շարադրանք»,
- ✓ «Կանխագուշակումներ հենակետային բառերով ու արտահայտություններով »
- ✓ «Կանխագուշակության աղյուսակ»
- ✓ «Բանալի բառեր»
- ✓ «Մտագրոհ»
- ✓ «Խմբավորում»
- ✓ «Հնգյակ»
- ✓ «Քառաբաժան»:

Ընդհանրապես ստեղծագործական աշխատանքները պատկերավոր մտածողության ձևավորման ու զարգացման հրաշալի միջոց են: Երեխաները սկսում են մտածել այս կամ երևույթի մասին, համադրել դրա հետ փոխկապակցված պատկերներ, խորհրդանիշներ, ձևավորել գեղարվեստական պատկերավոր խոսք: Օրինակ՝ հանելուկների ստեղծումը զարգացնում է սովորողների տրամաբանությունը, խոսքը, գործի դնում երևակայությունը: Հանելուկների կազմումը ուղղված է աշակերտի բառապաշարի զարգացմանը, ոչ ստանդարտ մտածելակերպի ձևավորմանը: Ի դեպ հանելուկների կազմումը կարելի է օգտագործել ոչ միայն մայրենիի, հայոց լեզվի ժամերին, այլ նաև վիկտորինաների, տարբեր առարկաներից գիտակների մրցույթների անցկացման ժամանակ: Նույնը կարելի է ասել նաև առակների, հեքիաթների ստեղծման մասին:

Գրականության վերջնական նպատակը մարդն է, ելակետը նույնպես մարդն է: Ուսուցչի ամենօրյա նպատակն էլ պետք է լինի աշակերտի պատկերավոր մտածողության ձևավորումը, ինչն առավել նպատակահարմար է գրականության դասերին:

Սովորողների փաստարկված խոսք կառուցելու հմտությունների ձևավորումը «Գրականություն» առարկայի դասերին

Փաստարկված խոսք կառուցելու հմտություններ ձևավորելու համար նախ և առաջ պետք է ուսումնական գործընթացը նպաստի քննադատական մտածողության զարգացմանը, որը հիմնված է վերլուծելու, հասկանալու և հասկացածը գնահատելու վրա:

«Քննադատական մտածողությունը, վերլուծաբար գնահատում է գաղափարները՝ դրանք կոնկրետ եզրակացությունների բերելու համար: Այս եզրակացությունները հիմնված են անհատի բարոյականության, արժեքների և անձնական սկզբունքների վրա:»:[10]

Այսպիսով՝ քննադատական մտածողությունն ուղղակիորեն ազդում է անձի բազմակողմանի զարգացվածության վրա, որն ավելի տրամաբանող և վերլուծող է դարձնում նրան՝ թույլ տալով կշռադատված և իմաստուն որոշումներ կայացնել՝ ելնելով կոնկրետ իրողություններից:

Քննադատական մտածողության զարգացումը իր հերթին նպաստում է փաստարկված խոսքի զարգացմանը: Փաստարկումը խոսքային ու սոցիալական գործունեություն է, որի խնդիրն է վիճելի տեսակետը փոխկապակցված փաստերի ներկայացմամբ ընդունելի դարձնելը: Ավստրալիացի փիլիսոփա Չարլզ Լեոնարդ Հեմբլինը փաստարկում է համարում «խոսքային ու ոչ խոսքային ցանկացած գործունեություն, որով մեկը համոզում է մյուսին»[11]: Ավելի լայն իմաստով փաստարկում ասելով հասկանում են փաստարկներ, ապացույցներ ու հերքումներ ներկայացնելու արվեստը, կշիռ ունեցող հիմնավորների ներկայացումը այնպիսի որոշումների կայացման համար, որոնցում կարող ենք վստահ լինել:

---

[10] Նալչաջյան Ա.,Մկրտչյան Ս.,Հոգեբանության ներածություն, Երևան 2011

[11]Обучение способам аргументации в школе: эволюция методов https://nsportal.ru/shkola/russkiy-yazyk/library/2013/01/21/obuchenie-sposobam-argumentatsii-v-shkoleevolyutsiya

Աշակերտները սեփական կարծիքի փաստարկման հիմնավորման մեջ շատ հաճախ են դժվարանում: Նրանք հետևում են ընդունված որևէ կաղապարի, եզրակացությունների չեն հանգում, չեն հիմնավորում իրենց խոսքը, և սա խանգարում է նրանց այս կամ այն հաղորդակցական խնդիրը լուծելիս. ինչ-որ թեմայով բանավոր կամ գրավոր շարադրանք, լիարժեք պատասխաններ, մտքերը տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնել և այլն:

Բայց նախ եկեք պարզենք՝ ինչ է փաստարկված խոսքը: Դա փաստարկների ներկայացում է՝ ասելիքի, առաջ քաշած վարկածների կամ համոզմունքների հանդեպ վստահություն ստեղծելու համար: Մտածողությունը սերտորեն կապված է խոսքի հետ: Դեռահասները ինքնուրույն դժվարությամբ են արտահայտում իրենց մտքերը թե՛ բանավոր թե՛ գրավոր: Եվ ուսուցչից լուրջ նպատակաուղղված աշխատանք է պահանջում սովորողների մտածողության ու խոսքի զարգացման առումով: Ահա մի քանի մեթոդներ, որոնք կօգնեն սովորողների փաստարկված խոսքի զարգացման գործում:

Բառային քարտեզ: Փաստարկված խոսք ձևավորելու հրաշալի մեթոդ է, որն օգնում է յուրացնել նոր հասկացությունները և հարստացնել խոսքը: Բառապաշարի ընդլայնումը իրականացվում է ինտերակտիվ ձևով՝ բառային քարտեզի օգնությամբ: Այն հետևյալ կազմը ունի, որն ի դեպ, կարող է գործնականում ստեղծագործաբար փոփոխվել ու լրացվել.

- ✓ հանդիպում նոր բառի հետ
- ✓ բառի կիրառության օրինակներ
- ✓ նրա տարբեր ձևերի կազմում
- ✓ հոմանիշների ու հականիշների կազմում
- ✓ բառի բացատրության նշում
- ✓ գործածությունը տեքստում (գիրք, դասագիրք)
- ✓ նոր բառով սեփական բառակապակցությունների կազմում
- ✓ տեքստի կազմում

«Բառային քարտեզ»



Կիրառությունը խոսքում

«Երկար-բարակ հարցեր». այս մեթոդը շատ հարմար է կիրառել ամփոփման դասի ժամանակ: Հարցերը կարող են կազմել հենց սովորողները: «Բարակ» հարցերը պահանջում են հասարակ պատասխաններ՝ այո՛, ո՛չ, չգիտեմ: Իսկ «Հաստ հարցերը>>՝ կշռադատված և հիմնավորված պատասխաններ:Այս մեթոդը կարելի է անգամ երկու խմբերի միջև մրցման ժամանակ կիրառել:

Բարակ հարցեր	Հաստ կամ երկար հարցեր
Պահանջում են միայն տեքստի իմացություն. ✓ Ո՞վ ✓ Ե՞րբ ✓ Որտե՞ղ ✓ Ինչպես էին անվանում... ✓ Ի՞նչ էին խոսում ✓ Ի՞նչ էր մտածում... ✓ Ի՞նչ էր անում	Պահանջում են վերլուծական մտածողություն: ✓ Բացատրեք՝ ինչու ✓ Ուրիշ ինչպես կարող էր վարվել ✓ Ի՞նչ կլիներ, եթե ✓ Կարո՞ղ էր ✓ Որո՞նքեն նմանություններն ու տարբերությունները ✓ Եթե դուք հայտնվեիք իրավիճակում ✓ Համաձայն ես, որ ...

Փոխներգործուն գրառումների համակարգ.

V	+	–	?
Գիտեի	Իմացա	Հակասում է իմ իմացածին	Ուզում եմ այդ մասին իմանալ ավելին

«Խաչվող քննարկում»: Այս անգամ ընտրվում է թեմա, որը միավորում է երկու հակադիր տեսակետներ: Յուրաքանչյուրը գրում է 3-5 փաստարկ յուրաքանչյուր տեսակետի օգտին: Փաստարկները ընդհանրացվում են փոքրիկ խմբերում: Մասնակիցները բաժանվում են երկու խմբի. մի խումբը կլինի այն, որին հարազատ է առաջին տեսակետը, մյուսը,որին հարազատ է երկրորդ տեսակետը: Խմբերը փաստարկները դասավորում են ըստ կարևորության և սկսվում է խաչաձև քննարկումը. առաջինը խումբը ներկայացնում է իր փաստարկը, երկրորդը՝ դրա հակափաստարկը:

Բոլոր այս մեթոդները սովորողների մեջ զարգացնում են փաստարկումներ կատարելու հմտությունները, ձևավորում սեփական դիրքորոշում:

Փաստարկված խոսքի զարգացմանը կարող են նպաստել քննադատական մտածողության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս.

- ✓ կանոնակարգել և վերլուծել տեղեկությունը,
- ✓ ձևակերպել և լուծել խնդիրները,
- ✓ աշխատել հասկացություններով,
- ✓ կառուցել փաստարկված խոսք,
- ✓ ստեղծագործաբար վերարտադրել նոր տեղեկությունը և այլն:

Փաստարկված խոսք կազմելու հմտությունների ձևավորումը կապված է.

ա) ստեղծագործության բովանդակային հաջորդական զարգացման,

բ) հերոսների արարքների վերլուծության,

գ)դեպքերի, հերոսների արարքների դրդապատճառների, շարժառիթների բացահայտման,

դ) հուզական-հոգեբանական մեկնաբանության հետ:

Կարևորվում է ստեղծագործության անհատական ընկալումը զգայական վերլուծության, տեսողական պատկերների, այլ զգացողություններեի միջոցով:

Սովորողն ասես յուրովի թարգմանում է իր տեսածը և զգացածը: Այսպիսի մոտեցումը աշակերտին տանում է փաստարկված մտածողություն ձևավորելուն:

Փաստարկված խոսք կազմելու հմտությունների ձևավորման համար կարևոր է զարգացնել գեղարվեստական ստեղծագործության քննական ընկալումը: Այն թույլ է տալիս ընթերցողին մի քայլ հեռանալ բովանդակությունից, արդեն ձեռք բերած

գիտելիքների լույսի ներքո մտածել դրա իրավացիության, կիրառականության մասին: Աշակերտը պետք է հասկանա, որ սովորելու գործընթացը պահանջում է անընդմեջ փորձառություն:

Երբ ուսումնասիրում ենք ուժեղ տպավորություն գործող որևէ ստեղծագործություն (Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմը, Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը և այլն), պետք է օգնենք աշակերտին ստեղծել կապեր և ձևավորել պատկերացումներ, ինչպես ստեղծագործության մեջ, այնպես էլ նրանից դուրս, նոր սովորածը համադրել կամ հակադրել այլ ստեղծագործությունների հետ, կապել իրական կյանքին: Աշակերտը սկսում է հասկանալ, որ գիտելիքը միայն այն չէ, ինչ գրված է դասագրքում կամ հաղորդում է ուսուցիչը, այլ նաև՝ իր գլխում ծագած մտքերը:

Ընթերցանության ընթացքում հաճախ պետք է հարցեր ուղղել սովորողներին՝ նրանց հետաքրքրությունը շարժելու համար, ստեղծագործության բովանդակությունը ընկալելու ընթացքում:

1. Ի՞նչ եք կարծում, հետո ի՞նչ է կատարվելու
2. Ի՞նչ եք մտածում այս կամ այն կերպարի մասին
3. Դու ի՞նչ կանեիր նրա փոխարեն
4. Ի՞նչ եք մտածում ձեր ընկերոջ հայտնած մտքերի մասին: Եթե համաձայն եք, կամ՝ ոչ, ինչո՞ւ:

Սրանք բաց հարցեր են, որոնք չեն ենթադրում մեկ ճիշտ պատասխան: Այսպիսի հարցադրումները աշակերտին մղում են ինքնուրույն դատողություններ անելուն, փաստարկված խոսք կազմելուն:

ճիշտ կողմնորոշվելը:

Փաստարկված խոսք կազմելու հմտությունների ձևավորմանը նպաստում է հերոսների հետ երկխոսություն կազմելը: Դիտարկենք Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի հերոսուհու հետ երկխոսություն կազմելու մի օրինակ: Ուղղորդող հարցեր առաջարկել՝ ուղղված հերոսուհուն:

- Ինչպիսի՞ հայր էր Փարվանա արքան:
- Ինչո՞ւ հենց անշեջ հուր պահանջեցիր:
- Սպասո՞ւմ էիր այսպիսի վախճանի:
- Եթե ժամանակը հետ տայիր, ի՞նչ կանեիր:
- Ի՞նչ կասես ընթերցողին… և նման հարցեր:

Այսպիսի աշխատանքը խթանում է սովորողի քննադատական մտածողությունը, ինքնավստահություն է հաղորդում նրան՝ քննադատաբար ընկալելու հերոսների վարքագծերը, ստեղծագործության դեպքերն ու իրադարձությունները:

Քննադատական մտածողությունը ձևավորվում է հարցերի միջոցով, բանավեճերի, «ինչուների» օգնությամբ:

Բերենք դասարանային բանավեճի մի օրինակ: Նախ պետք է ընտրել վիճահարույց հարց: Օրինակ, վերցնենք Ալ. Շիրվազադեի «Արտիստը» պատմվածքի հերոսի՝ Լևոնի ինքնասպանության փաստը: Կազմակերպենք մտագրոհ՝ պարզելու համար դասարանի դիրքորոշումը: Ապա նմանատիպ վերաբերմունք ունեցող աշակերտներին խմբավորենք: 1-2 րոպե միմյանց հետ խորհրդակցելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց դիրքորոշումները: Տրվում է ժամանակ խմբերին՝ քննարկելու և ներկայացնելու իրենց դիրքորոշման իրավացի լինելը: Քննարկման արդյունքում փաստարկների շարքը հարստացվում է, վերամշակվում: Ապա խմբից որևէ մեկը ներկայացնում է լիարժեք պատասխանը: Քննարկման արդյունքում հակառակորդ խումբը գնահատում է, թե արդյոք համոզիչ են բերված փաստարկները: Ուսուցիչը վերահսկում է բանավեճը և ապահովում է անկողմնակալություն: Առաջարկում է աշակերտներին հիշել նման իրական պատմություններ, զուգահեռներ անցկացնել իրականության և գեղարվեստական ստեղծագործության միջև: Խմբերը գնահատում են միմյանց, նշում ուժեղ և թույլ կողմերը:

Այսպիսով, փաստարկված խոսք կառուցելու հմտություններ զարգացնելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ձևավորել քննական մտածողություն, որի շնորհիվ մարդը, գաղափարների և տեղեկատվության հետ փոխգործածության մեջ մտնելով, մտածում է քննադատաբար (քննելով և դատելով): Յուրաքանչյուր դաս սովորողի համար պետք է լինի օգտակար: Նա պետք է զինվի առօրյա կյանքում կիրառելի գիտելիքներով:

Պատկերավոր մտածողություն և փաստարկված խոսք կազմելու հմտություններով օժտված աշակերտը կյանքն ընկալում է ստեղծագործաբար՝ իր անձնական մոտեցումներով ու դիտարկումներով, իր հստակ և կշռադատված փաստարկներով: Սա մարդ-անհատի ձևավորման կարևոր հենասյուներից մեկն է:

Եզրակացություն

Պատկերավոր մտածողությանը և փաստարկված խոսքի զարգացմանը նպաստող մեթոդներն ու միջոցները բավական շատ են և արդյունավետ:

Պատկերավոր խոսքն ու մտածողությունը ստեղծագործ, մտածողության բարձր մակարդակ ունեցող անհատի վկայականն են:

Գրականության ուսումնասիրությունը, ընթերցումն ու վերլուծությունն ակամայից օգնում են սովորողին՝ կյանքում ծագած խնդիրներին տալ հստակ և փաստարկված լուծումներ: Այս ճանապարհին նրա լավագույն ուղեկիցն ուսուցիչն է: Նրան է վստահված այս հմտությունների ձևավորման բարդ ու դժվարին ուղին:

Ուսուցիչն է ուղղորդում աշակերտին հիմնավորել իր կարծիքը, ներկայացնել հստակ փաստեր: Ուսուցչի օգնությամբ է սովորողն ուսումնասիրում տարբեր տեսական մոտեցումներ, փաստերով ներկայացնում իր խոսքը, ինչն էլ թույլ է տալիս ոչ միայն գրագետ դատողություններ անել, այլև հետազոտել տարաբնույթ դիրքորոշումներ ու տեսակետներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դոլուխանյան Ա., Հայ գրականության տեսություն, Երևան 2006
2. Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2006
3. Միքայելյան Ա., Մարդումյան Մ., Մտքի հրավառություն, Երևան, 2002,
4. Նալչաջյան Ա.,Մկրտչյան Ս.,Հոգեբանության ներածություն, Երևան 2011
5. Ջրբաշյան Է.,Գրականագիտության ներածություն, Երևան 1996
6. Обучение способам аргументации в школе: эволюция методов https://nsportal.ru/shkola/russkiy-yazyk/library/2013/01/21/obuchenie-sposobam-argumentatsii-v-shkoleevolyutsiya